



Լուսանկար Ն. Սուջայեանի

ԱՂԱԲԱԲԵԱՆ ԴՊՐՈՅԸ

Աստրախանի հայոց Աղարարեան դպրոցը հիմնել է ջուղայեցի Աստրախանի I կարգի վաճառական Նիկողայոս Յովհաննէսեան Աղարարեանը:

Նա 1804 թին միջնորդութիւն է յարուցանում Կայսեր առաջ և յայտնում է, որ իր եղբայրը իր մահւանից յետոյ 15000 ռ. է թողել բարեգործական նպատակով, ինքն էլ այդ գումարի վրա աւելացնում է 35000 ռ. և խնդրում է թոյլ տալ իրեն այդ գումարներով մի տուն կառուցանել, որի արդիւնքով երեխաներ սովորեցնել և այդ սովորող երեխաների կառավարութիւնը և հսկողութիւնը յանձնել հայր Անտոն վարդապետին:

Այդ առիթով Բարձրագոյն թոյլտուութիւնը ստանալուց յետոյ՝ 1910 թ. բացւում է դպրոցը «Աղարարեան» անունով:

Սկզբնական տարիներում դպրոցը լինում է անկազմակերպ և անկանոն մինչև 1838 թիւը, որից յետոյ Աղարարեան դպրոցը դառնում է գուլապային (уѣздное) դպրոց, որպիսի արիւնք ունի մինչև այսօր:

Դպրոցի գոյութեան երկար տարիների ընթացքում պաշտօնավարել են իրրև ուսուցիչներ բազմաթիւ անձնաւորութիւններ, որոնցից կարելի է յիշատակել Յարութիւն վարդապետ Այամզարեանին, Սերովրէ Գատկանեանին (1810—22 թւականներում) Թովմաս Տօտմեան (յայտնի տնտեսագէտ Վահան Տօտմեանի հայրը 1860—1887), Յովակիմ վարդապետ Տէր-Գրիգորեանին, Թադէոս վարդապետ Տէր-Գանիէլեանին և այլն:

Համարեա բացման օրից սկսած Աղարարեան դպրոցը ունեցել է պանսիօն 12 աշակերտի համար, որը 1886 թ. միջոցների սղութեան պատճառով փակել է, իսկ 1896 թին նորից բացւեց և գոյութիւն ունի մինչև այժմ:

Մինչև 1884 թւականը դպրոցի տնտեսական մասն էլ կառավարելիս է եղել մանկավարժական կազմը իսկ յիշեալ թւականից յետոյ տնտեսականի կառավարութիւնը յանձնւում է առանձին հոգաբարձական մարմնի, որը ընտրւում է Աստրախանի հայոցից:

Ներկայումս դպրոցը ունի երեք դասարան և մի պատրաստական, ամեն մի դասարանը երկու տարւայ կուրս է պարունակում, այսինքն՝ իւրաքանչիւր աշա-

կերս ամեն մի դասարանում պէտք է նստի երկու տարի:

Աւանդում են հետեւեալ առարկաները—հայոց, ռուսաց լեզուներ, կրօն, աշխարհագրութիւն, թւարանութիւն, սուսաց պատմութիւն, հաշւապահութիւն, երկրաչափութիւն, և երգեցողութիւն:

Բացի կրօնից և հայերէնից փնացած բոլոր առարկաները աւանդում են ուսուցիչներ:

Ներկայումս աշակերտների թիւը հասնում է 60 ի, որոնցից 20 հոգի գիշերօթիկ են: Այդ թւից 12 հոգի պահւում են դպրոցի հաշուով, 6 հոգի Գր. կազակեանի կտակով. (կտակել է 20 հազար ռուբլի) երկուսն էլ Եզր. Ասատուրեանների կտակով:

Պանսիօնի վրա ծախսւում է 4000 ռուբլի:

Աղարարեան դպրոցը այժմ միանգամայն ապահով է: Նա քաղաքի կենտրոնում ունի մի տնային տուն, որը մինչև 20000 ռուբլի տարեկան արդիւնք է բերում:

Տարիների ընթացքում շարունակ դպրոցի վարչների զբաղմունքի առարկան է եղել դպրոցի բարեփոխութեան հարցը. որովհետև այդ կերպ պահել և շարունակել դպրոցը անկարելի է:

Ութ, ինը տարւայ ընթացքում, երբ կարելի է միջնակարգ դպրոց աւարտել, Աղարարեան դպրոցի աշակերտները քաշքշիւով հազիւ իրենց դպրոցն են աւարտում:

Չնայելով, որ Աղարարեան դպրոցը իր ժամանակին անպայման գեր է խաղացել աստրախանցիների համար և դժւար թէ գտնւի Աստրախանի հայերի մէջ մէկը, որ աշակերտած չլինի այդ դպրոցին, այնուամենայնիւ այսօր այդ դպրոցը վանում է իրենից աշակերտութեանը. գրա կենդանի ապացոյցը այն է, որ տարէցտարի աշակերտների թիւը նւազում է:

Եւ դա հասկանալի է, հնադարեան սխտեմի դպրոցը (уѣздное училище), որը համարեա միակն է ամբողջ Ռուսաստանում, իր յետամնաց ծրագրով և երկ-երկու տարւայ կուրսով չի բաւականացնում այժմեան աշակերտութեանը և անս այդ հանգամանքն է, որ շարունակ մտածել է տալիս հոգաբարձութեանը բարեփոխելու դպրոցը, որը սակայն, անս տարիներ է, որ փնտմէ նոյն դրութեան մէջ:

Այս վերջին տարիները դպրոցը բոլորից իր հարիւրամեակը և չնայելով ընդհանուր ժողովներից մէկում որոշեց տօնել այդ պատմական դպրոցի 100 ամեայ յօրելեանը և հրատարակել նրա պատմութիւնը, որի առիթով և ընտրեց առանձին յանձնաժողով, բայց մինչև օրս դպրոցի հոգաբարձութիւնը այդ յօրելեանը տօնելու չի ձեռնարկում:

Մեր կարծիքով յօրելեանի կատարելը անհրաժեշտ է, որովհետև դպրոցը ունի 100 ամեայ պատմական անցեալ և նա հիմնւել է այն ժամանակներում, երբ սակաւ էին հայ դպրոցներ և իրրև այդպիսին որոշ գեր է խաղացել մայրենի խօսքը և գիրը տարածելու գործում ինչպէս աստրախանցիների նոյնպէս և ընդհանրապէս հայերի մէջ:

Ս. Բ. ԱՍԼԱՆԵԱՆ

1913 թ. հոկ. 3.

